



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտի 2025 թվականի թիվ 27-Ա

ք. Երևան

«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), ուսումնասիրելով 2025 թվականի մարտի 03-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 07 վարչական վարույթի նյութերը, **պարզեց**.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ **Հեռարձակող**) գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է Հեռարձակողի «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի (այսուհետ՝ **Ծրագիր**) կողմից **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի** դրույթի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի մարտի 03-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2025 թվականի մարտի 03-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ **Արձանագրություն**):

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Արձանագրության համաձայն՝ Հեռարձակողի Ծրագրի 2025 թվականի փետրվարի 22-ից 27-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված որոշ ֆիլմեր պարունակել են ծխելու տեսարաններ, որոնք չեն ուղեկցվել «**Ծխելը վնասում է ձեր առողջությանը**» գրառմամբ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի մարտի 04-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2025 թվականի մարտի 18-ին Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանման մեջ հայտնել է հետևյալը.

«(...) [Կ]ազմակերպությունը հնարավորինս խստորեն հետևում է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի պահանջներին և անատարկելիորեն ընդունում է պատահականորեն տեղի ունեցած որոշակի հաղորդման ցուցադրման ընթացքում «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ ուղեկցման պահանջի պահպանման բացթողման թերացումը:

«(...) [Պ]եպք է նշենք, որ թեմային վերաբերող տեսանյութերը, նկարահանված լինելով մեծամասն մեր հանրային հեռուստաընկերության և մնացած մասը մեր սեփական գործունեության ընտանցքում, վերաբերում են մեր մշակութային ժառանգությանը և արվեստին:

Բազմաթիվ հանճարեղ դերասաններ և մեծեր, ինչպիսիք են՝ Սոս Սարգսյանը և մյուսները, ժողովրդի պատկերացմամբ ունեն որոշակի հավաքական կերպարանացում, ուր կան մտածելու, ստեղծագործելու և նաև ծխելու պատկերացումներ տեսարաններ: Նկարահանումների ժամանակահատվածում չէր գործում վերոնշված օրենքը և նման տեսարանները տեսանյութերում օբյեկտիվ պատճառներով անբաժանելիորեն առկա են: Պեպք է նշել, որ արձանագրությամբ նշված վրիպումը ոչ մի ձևով չի արդարացնում մեզ, բայց հաշվի առնելով վերը ասվածը կարելի է ենթադրել, որ նշված բացթողնված նյութերում ծխող հայտնի դերասանի պատկերը հնարավոր է էականորեն չի ներգործել հասարակության վրա և ենթադրաբար չի առաջացրել լուրջ ոչ ցանկալի հետևանքներ: (...) Հայտնի դերասանի հավաքական ամբողջական կերպարի մի քանի վրիպում բացթողումը կարծում ենք ներելի է և լուրջ հետևանքներ չի ունեցել:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական

վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:»:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսապատկերումը կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):»:

Արձանագրում ենք, որ Հեռարձակողը 2021 թվականի հունվարի 20-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 301, գործողության ժամկետը՝ 21.01.2021 թ. - 21.01.2028 թ.) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ: Վերջինս պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված հետևյալ սահմանափակումը՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:**

Հանձնաժողովն արձանագրում է, որ **Օրենքի 3-րդ գլխի** դրույթներով տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների տեսալսողական հաղորդումների կազմակերպման համար սահմանվել են ընդհանուր պահանջներ, մասնավորապես, **Օրենքի 10-րդ հոդվածի**

8-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդում հեռարձակելիս՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը, սակայն Հեռարձակողի կողմից

22.02.2025 թ.

– Սոս Սարգսյանի մասին հաղորդում, ժամը՝ 07:00:39-07:01:54 (հեռարձակման մեկնարկ՝ 07:00:39).

26.02.2025 թ.

– «Մենք և ժամանակը» հաղորդում, ժամը՝ 01:19:12 - 01:19:23 (հեռարձակման մեկնարկ՝ 01:04:08).

– «Մենք և ժամանակը» հաղորդում (կրկնություն), ժամը՝ 12:48:06 - 12:48:17 (հեռարձակման մեկնարկ՝ 12:33:04).

– «Մեկ օր ճանաչված մարդկանց հետ» հաղորդում, ժամը՝ 16:03:20 - 16:03:27 (հեռարձակման մեկնարկ՝ 16:03:03).

– «Մեկ օր ճանաչված մարդկանց հետ» հաղորդում (կրկնություն), ժամը՝ 22:03:58 - 22:04:07 (հեռարձակման մեկնարկ՝ 22:03:40).

27.02.2025 թ.

– «Մեկ օր ճանաչված մարդկանց հետ» հաղորդում (կրկնություն), ժամը՝ 09:33:52 - 09:34:01 (հեռարձակման մեկնարկ՝ 09:33:34):

Ծրագրում հեռարձակվել են ֆիլմեր, որտեղ կան ծխելու տեսարաններ պարունակող դրվագներ: **Տեսալսողական հաղորդման մեկնարկին բացակայել է «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը:** Սույն համատեքստում Հեռարձակողը չի պահպանել **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:**

Վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի պարզաբանման վերաբերյալ Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

ի պատասխան այն պնդման, որ նախապես նկարահանված այն տեսանյութերը, որոնք իրենց բնույթով ու բովանդակությամբ վերաբերում են մշակութային ժառանգությանը և արվեստին՝ ցուցադրման պարագայում *ներելի է և լուրջ հետևանքներ չի ունեցել*, իրավական որևէ հիմնավորում ոչ միայն չի պարունակում, այլև հաստատում է, որ քննարկվող տեսանյութերի ցուցադրումը գիտակցված է եղել: Այս պարագայում անհրաժեշտ է արձանագրել, որ Օրենքի համապատասխան կարգավորումն իր բնույթով իմպերատիվ է և հստակ՝ արձանագրված իրավախախտմանը հետևում է վարչական համապատասխան տույժը, որը մեղմացուցիչ հանգամանք, ինչպես նաև կարգավորող պետական մարմնի կողմից որոշման կայացման համատեքստում հայեցողություն չի նախատեսում: Ասվածի

վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողի ներկայացրած բացատրությունը, դիրքորոշումը չի կարող բավարար իրավական հիմք հանդիսանալ, որպիսի պարագայում **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով** սահմանված կարգով Հանձնաժողովը չարձանագրի իրավախախտումը, վերջինիս իրավական գնահատական չտա և չկիրառի համապատասխան պատասխանատվության միջոցը:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ առկա չէ օրենսդրական որևէ վերապահում, համաձայն որի վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովը պետք է գնահատի ցուցադրված տեսալսողական նյութերում առկա բովանդակության՝ հասարակության վրա ենթադրյալ կամ ընկալվող ազդեցության բնույթը:

Այսպիսով, Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստը, որի մասին նշել է պարզաբանման մեջ:

Հանձնաժողովը համանման իրավախախտումն արձանագրելիս կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումների հեռարձակման նկատմամբ տարածվող օրենսդրական սահմանափակումներն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը սովյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես, իր մեջ ներառում է հանրային առողջության պահպանմանն ուղղված պետական քաղաքականության իրացումը: Հաշվի առնելով քննարկվող իրավահարաբերության կարգավորման իմպերատիվ բնույթը՝ Հեռարձակողը պարտավոր է պահպանել Օրենքի հիշյալ պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է **Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի** հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում,
- 2) **տուգանք,**
- 3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում,
- 4) 4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝ **առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:**

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել **«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասով** սահմանված տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

2025թ. մարտի 31
ք. Երևան